

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԵՋՈՒ ԵՎ ԼԵՋԱԿԱՆ ՆՈՐՍ
(գեղարվեստական խոսքում
նախադասություն-կառույցների հետազոտությունը
որպես հասարակական լեզվամտածողության
փուլային ուսումնասիրման միջոց)

Լեզվաբանական հետազոտությունների լավագույն հումք է համարվում գեղարվեստական գրականությունը, որը «ազգային լեզվի հարստության, նրա զարգացման ամենապերճախոս վկայագիրն է»¹, իսկ «գրական երկի բոլոր պատկերները, յուրաքանչյուր միտք, նկարագրություն, գեղարվեստական մանրամասն, - ամեն ինչ այստեղ հանդես է գալիս միմիայն լեզվական «հագուստով»²։ Սիա թե ինչու գրականության լեզուն լինի դա: Կերպարային խոսք, թե հեղինակային, հաճախ գերիազեցած է լինում բանավոր խոսքին կամ ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ բազմաբնույթ կառույցներով, ուր ջնջվում են սահմանները խոսքի ոճական տարբեր դրսևորումների միջև:

Գեղարվեստական գրականությունն ուսումնասիրող հիմնական գիտակարգը գրականագիտությունն է, սակայն գրականագետները ստեղծագործության համակողմանի վերլուծության նպատակով հաճախ հարկադրված են առնչվել նաև այնպիսի խնդիրների հետ, որոնք ուղղակիորեն մտնում են լեզվաբանության տիրույթ: Նման խնդիրներից են նաև գեղարվեստական լեզվի շարահյուսական դրսևորումները, որոնք կարող են ներկայանալ թե լեզվական նորմի շրջանակներում, թե դրանից դուրս: Գեղարվեստական պատկերավորման բազմաթիվ միջոցների կողքին, ստեղծագործության լեզուն հարստացնելու, կոլորիտային կերպարներ ստեղծելու և նման այլ նպատակներով, գեղարվեստական երկում մեծ տեղ է տրվում քերականական այնպիսի միջոցների, ինչպիսիք են ամբողջական նախադասությունների կամ նրանց շարահյուսության հոմանիչությունն ու համանշխարհությունը, խոսակցական լեզվից եկած շարահարական կառույցները, խնդրառության կիրառական տառաբնույթ ձևերը և այլն:

Գրական երկը հետապնդում է որոշակի գաղափարական նպատակ, որն իրականացվում է լեզվի միջոցով: Դա բովանդակության և ձևի դիալեկտիկա-

¹ ԶՐԲԱՇՅԱՆ Է. Գրականության տեսություն, Եր., 1980, էջ 220.

² Նույն տեղում էջ 218.

կան միասնությունն է, և գեղարվեստորեն հաջողված է դառնում այն ստեղծագործությունը, որում պահպանվում է դրանց ներդաշնակությունը: «Գեղարվեստական գրականությունը հետազոտողների հիմնական խնդիրն է ոչ թե հնարավորին չափ հստակ սահմանազատել լեզվաբանի և գրականագետի գործունեության ոլորտները, այլ կարողանալ ուսումնասիրել ստեղծագործությունը մի կողմից՝ որպես լեզվի, ոճի և կոմպոզիցիայի միասնություն, մյուս կողմից՝ որպես հեղինակի մտածելակերպի, աշխարհայացքի և գաղափարախոսության միասնություն»³:

20-րդ դարավերջի հայագիտության մեջ իր ծանրակշիռ տեղն զբաղեցրած **ոճաբանությունը** յուրատեսակ կամուրջ է դառնում գրականագիտության և լեզվաբանության միջև, սակայն այդ երկու գիտակարգերը կապող ոչ բոլոր առնչություններն են, որ մտնում են նրա գործառույթների մեջ. Ոճաբանությունը գրականությունից վերցնում է ուսումնասիրման նյութ, լեզվաբանությունից վերլուծական միջոցներ, և կատարած ոճագիտական եզրահանգումներով ավելի շատ ծառայություն է մատուցում գրականագիտությանը: Նույնը կարելի է ասել **գրականության տեսություն** գիտակարգի մասին: Մինչդեռ լեզվաբանության համար էական նշանակություն ունեցող շատ լեզվական իրողություններ, որոնք տեսանելի են հենց գեղարվեստական խոսքում և որոնց բազմապլան հետազոտությունը կարևորվում է լեզվաբանության մի շարք բնագավառների համար, չունենալով ընդգրկման առանձին գիտակարգ կամ միջգիտակարգ, մնում են ուշադրությունից դուրս:

Այսպես, օրինակ, **գեղարվեստական խոսքում** ուրույն տեղ ու դեր ունեն բարդ **նախադասությունները** իրենց տեսակների ողջ բազմազանությամբ: Դրանց լեզվաբանական մանրակրկիտ ուսումնասիրությամբ հայերենում սկսել են զբաղվել 20-րդ 2-րդ կեսերից (Ն Պառնասյան, Ա Պապոյան, Ս Աբրահամյան, Վ Առաքելյան, Բ Վերդյան և այլն): Լեզվաբանների նպատակը եղել է դրանց որպես քերականական երևույթի համակողմանի քննությունը, որի արդյունքում հայերենի քերականագիտության մեջ զարգացել է շարահյուսագիտության «Բարդ նախադասություն» գիտաճյուղը:

Սակայն, կապված դրանց կիրառական լսոաձնահատկությունների հետ, պետք է ասել, որ քիչ են գեղարվեստական խոսքում դրանց գործածման վիճակագրական ցուցանիշներն արտացոլող այնպիսի հետազոտությունները, որոնց արդյունքում կարելի լիներ լեզվի փուլային, համաժամանակային և

ԳԱՄՊԱՐՅԱՆ ՍԶ., Գեղարվեստական գրականության ուսումնասիրության մի քանի մեթոդաբանական հարցեր // Բանբեր Երևանի համալսարանի, 1987, N3, էջ 177.

տարածամանակային կամ համեմատական զարգացման մասին որոշակի եզրահանգումների գալ: Այս հարցը մշտապես հուզել է թե լեզվաբաններին, թե գրականագետներին և եղել է քննարկման առարկա, մանավանդ որ դրա կարևորությունը մեծանում է կապված լեզվի զարգացման գործընթացի հետ, որի ընթացքում գրավոր և բանավոր խոսքերը շարունակ գտնվում են փոխազդեցության մեջ, շարունակ փոխներգործում են միմյանց վրա և դրանով պայմանավորում լեզվական նորմերի նոր ձևավորումները:

Նախադասությունը, որպես շարահյուսական միավոր, լեզվական համակարգի ամենահետաքրքիր և ուսումնասիրման անսպառ նյութ պարունակող քերականական երևույթներից է: Լեզվաբանության մեջ այն դասվում է լեզվական համակարգերի բաց դասերի խմբում, քանի որ դուրս է կադապարայնությունից և չունի ձևափոխության դրսևորումների սահմանափակումներ: Այն ունի քերականական հատկանիշների և ոճական արտահայտչաձևերի շարունակական փոփոխականության միտում, լեզվի զարգացման այս կամ այն փուլում հասարակական լեզվամտածողությունն արտահայտելու բազմապլան հնարավորություններ:

Նախադասությունը, լինելով լեզվական կառուցվածքի բարձրակարգ մակարդակ, սերտորեն առնչվում է իրեն ստորակարգվող լեզվական այլ մակարդակների հետ, կարգաբերում է դրանց նյութական միավորների ողջ պաշարը որպես լեզվական շինանյութ, և կառուցողաբար ներառում իր մեջ: Տարրության, հնչյության, ձևության, բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներն իրենց միավորներով, դրանց նորմատիվ և շեղումնային բոլոր տարբերակներով ի վերջո կիրառական արտացոլում են գտնում ստորոգային մակարդակի նախադասության մեջ:

Նախադասությունը նաև լեզվական այն երևույթ է, որի մեջ առավել ցայտուն է դրսևորվում լեզվական համակարգերի և հակահամակարգերի դիալեկտիկական հակադրամիասնությունը: «Լեզվական համակարգը լեզվի ամբողջությունն է համակարգերի ու հակահամակարգերի միասնությամբ»⁴, իսկ «հակահամակարգերը լեզվի տվյալ փուլում գործառուղ ավանդական, կողմնակի և սաղմնավորվող համակարգեր են»⁵: Հատկապես նախադասություն-կառույցներում են երևան գալիս նշված «հակահամակարգերին» բնորոշ լեզվական երևույթները արխաիկ կամ քարացած լեզվաարտահայտչաձևեր, բարբառային կամ այլ լեզուներից ներմուծված զրական հայերենին ոչ հարիր

⁴ Տե՛ս ՄԴԿՅԱՆԷ Է. Լեզվական կառուցվածքի մակարդակները // Բանբեր Երևանի համալսարանի 1972 N2 էջ 108:

⁵ Նույն տեղում էջ 113

քերականական սխալ կառույցներ, որոնք թեև միառժամանակ կարող են համարվել տվյալ շրջանում ընդունված լեզվական նորմայից շեղումներ, սակայն, կարող են նաև ժամանակի ընթացքում քննություն բռնել և դառնալ լեզվական օրինաչափություն:

Նախադասությամբ ավարտվում է լեզվի կառուցվածքային մակարդակների հիերարխիան և սկսվում է **խոսքը**: Նախադասությունը խոսքի նվազագույն միավորն է, և դրանով իսկ կամրջում է խոսքն ուսումնասիրող այնպիսի գիտակարգեր, ինչպիսիք են՝ լեզվաբանությունը, ոճաբանությունը, գրականագիտությունը, գրականության տեսությունը և այլն: Խոսքն ունի իր կիրառական ոլորտները՝ իրադրական և գործառական, որոնցում էլ երևան է գալիս լեզուն իր ոճական տարբեր դրսևորումներով՝ խոսակցական, գեղարվեստական, հրապարակախոսական, ճարտասանական, գրասենյակային և այլն: Լեզվաբանությունը ուսումնասիրում է խոսքային համակարգերի բոլոր դրսևորումները՝ հիմնականում չափանիշ ունենալով սահմանված լեզվական նորմերը: «Լեզվական նորմը գտնվում է խոսքի և համակարգի միջև... Որպես կանոն նորմը լեզվից վերցնում, օրինականացնում է այն ամենը, ինչ արդեն ուղղակի կամ անուղղակիորեն կա համակարգում (այդ թվում նաև շեղումները)»:

Խոսքի կիրառական շատ ոլորտների, հատկապես բանավոր խոսքի ուսումնասիրման մեթոդները չեն կարող կատարյալ լինել, քանի որ ոչ միշտ է տեխնիկապես հնարավոր հետազոտվող նյութի ամբողջականացումն ու համակարգումը: Դրան խոչընդոտում են բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ՝ բանավոր-առօրեական խոսքի հարափոփոխականությունը՝ կապված հասարակական երևույթների հետ, ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական իրավիճակը, ՋԼՄ-ների, բարբառների ու ժարգոնների, արտաքին հին և նոր ազդեցությունների ոլորտը, մարդկանց դասային-խավային շերտավորումը, խոսողի աշխարհայացքը, կրթական մակարդակը, խառնվածքային-անհատական, տարիքային առանձնահատկությունները և այլն:

Գեղարվեստական խոսքի լեզվաոճական հարցերն այսօր էլ բանավեճային թեմա են, որի շուրջ կան հեղինակավոր լեզվաբանների ու գրականագետների տարածետ կարծիքներ: Սակայն, գնահատման չափորոշիչները ոչ միշտ են մնայուն: Եթե որոշ վերլուծաբաններ գրական երկի լեզվական չափանիշ են համարում լեզվական նորմը, դրա սահմանները չխախտելը, ապա այս դեպքում, կարելի է ասել, միտված են նեղացնելու լեզվական նորմայի

“ԵՃԵՎՅԱՆ Լ Կ., Լեզու-նորմ-համակարգ // Բանբեր երևանի համալսարանի, 2007, N2, էջ 30

սահմանները: Լեզվական նորմը չափակարգում է լեզուն, սակայն քարացած կատեգորիա չէ: Այն ևս փոփոխվում է ժամանակի մեջ ենթարկվելով խոսքի մշակույթում գործող նպատակահարմարությանը⁷, որն էլ իր հերթին արտացոլվում է գեղարվեստական խոսքում: Կրկնվող շեղումները կարող են դառնալ օրինաչափություն և ժամանակի ընթացքում ձեռք բերել լեզվական նորմի կարգավիճակ: Այս երևույթը, լինելով լեզվի զարգացման օրինաչափ պահանջ, այսօր էլ առկա է գեղարվեստական խոսքում և իր արտահայտությունն է գտնում լեզվական տարբեր դրսևորումներով հատկապես բառօգտագործման և շարահյուսական կառույցների ոլորտներում:

Վերևում արդեն խոսվեց նորմի որպես խոսքի և համակարգի միջև գտնվող ասույթի մասին: Հարկ է ավելացնել, որ «նորման կենդանի, շարժուն, դինամիկ, հաճախ նաև փոփոխական իրողություն է... Յուրաքանչյուր հեղինակ (գրող, խոսող), որքան էլ պահպանում է լեզվի գործող նորման, տվյալ լեզվի անընդհատ զարգացման ազդեցությամբ, ներգործությամբ ու պահանջով միաժամանակ պետք է ձգտի թարմացնելու, վերանայելու լեզվական որոշ իրողություններ, այլ կերպ ասած նորման չի կարող քարացած լինել լեզվի զարգացման տարբեր փուլերում»: Այլ բան է լեզվի կոդավորումը, որը, հակառակ լեզվական նորմի, «պարտադրանքի հասնող, իրավաբանական ուժ ունեցող օրենքների համակարգ է»⁸, սակայն, որի գործառույթն ավելի շատ դիդակտիկ միտում ունի, քան լեզվաոճական ըննության:

Ինչպես նկատեցինք, գեղարվեստական արծակը հարուստ հումք է լեզվաոճական կամ զուտ լեզվաբանական հետազոտությունների համար: Այն հնարավորություն է ընձեռում վերլուծաբար ուսումնասիրել և բացահայտել լեզվական տարբեր մակարդակների զարգացման փուլերը, սահմանել դրանցից բխող պատմական օրինաչափություններ: Սակայն, լեզվի կառուցվածքի տարբեր կողմերը հավասարաչափ չեն զարգանում⁹, եթե ամենաարագ փոփոխվող մակարդակը բառայինն է (հատկապես դրա բառապաշարային շերտը), ապա ամենադանդաղը ստորոգայինն է նախադասությունը: Թերևս դա կարելի է պատճառաբանել նշված մակարդակի *բաց դասին* պատկանելու հանգամանքով, որը թույլատրում է լեզվական կառույցների շարունակական

⁷ ԵՁԵԿՅԱՆ Լ. Կ. Լեզու-նորմ-համակարգ // Բանբեր Երևանի համալսարանի, 2007, N2, էջ 30-35:

⁸ Տես նույն տեղում էջ 31

⁹ Նույն տեղում էջ 35

¹⁰ Տես Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973:

համալրում նոր մտածելակերպից եկող տարաբնույթ ծներով միաժամանակ
կիրառական ոլորտում պահպանելով հինը:

Սակայն, դրանով հանդերձ, չի կարելի չնկատել, որ գեղարվեստական
խոսքի այն ոլորտը, որը հենվում է ժողովրդախոսակցական լեզվամտածո-
ղության վրա, ունի պատմական զարգացման իր որոշակի շերտերը: Դրանց
վիճակագրական վերլուծության արդյունքում կարող են բացահայտվել նախա-
դասության մակարդակում առկա լեզվական այնպիսի օրինաչափություններ ու
շեղումներ, որոնց համակարգումը կարող է և գիտական արժեք ունենալ
քերականագիտության համար:

Ուստի գեղարվեստական խոսքի լեզվաբանական հետազոտությունը
կարող է գիտական հետաքրքրություն ներկայացնել կենդանի լեզուն ուսում-
նասիրող լեզվաբանության մի շարք այնպիսի բնագավառների շրջանում,
ինչպիսիք են քերականությունը, բարբառագիտությունը, պատմահամեմա-
տական լեզվաբանությունը, ռմբանությունը և այլն: